INTERNATIONAL MONETARY FUND

COMMUNICATIONS DEPARTMENT

Մամլո հաղորդագրություն թիվ. 17/128
ԱՆՀԱՊԱՂ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ
12 ապրիլի 2017 թ.

International Monetary Fund
Washington, D.C. 20431 USA

ԱՄՀ աշխատակազմն ավարտում է Հայաստանի «Երկարաձգվող ֆինանսավորման ծրագրի» հինգերորդ՝ վերջին ամփոփիչ ստուգումը և IV Հոդվածի շրջանակում 2017 թ. այցը Հայաստան

Առաքելության ավարտի մամլո հաղորդագրությունները ներառում են ԱՄՀ աշխատակազմի թիմերի հայտարարությունները, որոնցով հաղորդվում են երկիր կատարած այցից հետո նախնական եզրահանգումները: Սույն հայտարարության մեջ արտահայտված են ԱՄՀ աշխատակազմի տեսակետները և պարտադիր չէ, որ ներկայացնեն ԱՄՀ Գործադիր խորհրդի տեսակետները: Սույն առաքելության նախնական եզրահանգումների հիման վրա աշխատակազմը կպատրաստի զեկույց, որը, ղեկավարության կողմից հաստատվելուց հետո, կներկայացվի ԱՄՀ Գործադիր խորհրդին՝ քննարկման և որոշում կայացնելու համար:

- Սպասվում է, որ ՀՆԱ-ի աճը 2017 թ. կհասնի շուրջ 3 տոկոսի՝ ենթադրությամբ, որ տնտեսությունը կշարունակի թափ ստանալ, իսկ սպառողական գնաճը տարեվերջին կհասնի շուրջ 13/4 տոկոսի:

- Հայաստանի կողմից եկամուտների հավաքագրումը կգերազանցի 2017 թ. բյուջեի կանխատեսումը՝ տալով բյուջեի համեմատ տնտեսական աճին նպաստող արտաքին ֆինանսավորմամբ լրացուցիչ կապիտալ ծախսեր կատարելու հնարավորություն:

- Անհրաժեշտ է, որ ՀՀ ԿԲ-ն շարունակի ամրապնդել դրամավարկային քաղաքականության փոխանցման մեխանիզմը գնաճի նպատակադրման ծրագրին ավելի լավ սատարելու և ֆինանսական միջնորդությունը բարելավելու համար:

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) թիմը, Հոսեյն Սամիի գլխավորությամբ, մարտի 29-ից ապրիլի 12-ն այցելել է Երևան՝ «Երկարաձգվող ֆինանսավորման ծրագրի» (EFF) հինգերորդ և վերջին ամփոփիչ ստուգման և IV Հոդվածի 2017 թ. խորհրդակցությունների շրջանակում քննարկումներ անցկացնելու նպատակով:

Այցի ավարտին պրն. Սամիին արել է հետևյալ հայտարարությունը.

«Հայաստանը շարունակում է կրել արտաքին ցնցումների ազդեցությունը: 2014 թ. ի վերջից դրամական փոխանցումների և պղնձի գների էական անկումը լուրջ ազդեցություն է ունեցել տնտեսական աճի վրա՝ բացասաբար անդրադառնալով հարկաբյուջետային դիրքի վրա: 2016 թ. ՀՆԱ-ի աճը կազմեց ընդամենը 0.2 տոկոս, գնանկման ճնշումները պահպանվեցին, բյուջեի պակասուրդն աճեց մինչև ՀՆԱ-ի 5.6 տոկոսը, իսկ ընթացիկ հաշվի պակասուրդը պահպանվեց ՀՆԱ-ի 3 տոկոսից ցածր մակարդակում, և պահուստների բուֆերները վերականգնվեցին: Ֆինանսական հատվածում բանկերն ավարտել են ավելի բարձր նվազագույն կապիտալի համալրման գործընթացը: 2017 թ. սկզբին տնտեսական ակտիվության վերականգնման նշաններ են դրսևորվել, ընդ որում գրանցվել է մասնավոր հատվածի վարկավորման կուռ աճ, որին օժանդակել է դրամավարկային քաղաքականության մեղմումը: Մենք կանխատեսում ենք, որ 2017 թ. ՀՆԱ-ի աճը և տարեվերջի գնաճը համապատասխանաբար կհասնեն շուրջ 3 և 1¾ տոկոսի: Կան հեռանկարի ռիսկեր. դրամական փոխանցումների և պղնձի գների վերականգնումը հնարավոր է, որ տևական չլինի, իսկ հիմնական առևտրային գործընկերների մոտ տնտեսական աճը կարող է սպասվածից թույլ լինել:

«ԱՄՀ-ի օժանդակությամբ ծրագիրն ընթանում է նախատեսված հունով: Դեկտեմբերի վերջի դրությամբ բոլոր կատարողական չափորոշիչները և կառուցվածքային հենանիշերը կատարվել են: Թիմը քննարկել է 2017 թ. քաղաքականության շրջանակը՝ որպես վերջին ամփոփիչ ստուգումն ավարտելու հիմք: Աճին նպաստող արտաքին ֆինանսավորմամբ լրացուցիչ կապիտալ ծախսերի իրականացումը նպատակահարմար է՝ հաշվի առնելով հիմնավոր փաստերը, որ եկամուտների հավաքագրումը կգերազանցի բյուջեի կանխատեսումը: Սակայն վերականգնման փխրունությունը և եկամուտների ռիսկերը պահանջում են չնախատեսված իրավիճակների ծրագրեր, այդ թվում ոչ

առաջնահերթ ընթացիկ ծախսերի հնարավոր կրճատումներ՝ եկամուտների թերակատարման դեպքում: Թիմն աջակցում է իշխանությունների՝ գործող պրոցիկլային հարկաբյուջետային կանոնում շտկումներ անելու ծրագրերին, հարկաբյուջետային շրջանակի վստահելիությունը բարձրացնելու համար՝ միաժամանակ պաշտպանելով տնտեսական աճը: Հայաստանի Կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ) պետք է պատրաստ լինի քաղաքականության հետագա մեղմացմանը՝ գնաճի նպատակադրման ծրագրին համահունչ: ԱՄՀ-ի Գործադիր խորհրդի կողմից ամփոփիչ ստուգման քննարկումը նախատեսվում է 2017 թ. հունիսի վերջին: Հաստատումից հետո ԱՄՀ-ն կտրամադրի 15.69 միլիոն փոխառության հատուկ իրավունք (ՓՀԻ)՝ երկարաձգվող ծրագրի շրջանակում ընդհանուր հատկացումները հասցնելով 82.21 միլիոն ՓՀԻ-ի:

«Նայելով առաջ՝ Հայաստանի առջև շարունակում են ծառանալ էական մարտահրավերներ. պահպանվում է տատանողական և նեղ հենքով աճը, արտահանման ոլորտը համեմատաբար չդիվերսիֆիկացված է, պահպանվում է գործազրկության և աղքատության բարձր մակարդակը, պետական և արտաքին պարտքն՝ ավելանում: Դրա համար պահանջվում է վճռորոշ գործողությունների իրականացում՝ կայուն և ներառական աճի խթանման համար, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման, ենթակառուցվածքի և կրթության բարելավման, կոռուպցիայի դեմ պայքարի և գործարար միջավայրի բարելավման բարեփոխումներ: Իշխանությունները պետք է նաև հավատարիմ մնան հարկաբյուջետային այն ուղուն, որն ապահովում է պարտքի կայունությունը՝ նոր հարկային օրենսգրքի պատշաճ իրականացման և արտաքին ֆինանսավորմամբ կապիտալ ծախսերի առաջնահերթության սահմանման օժանդակությամբ: Անհրաժեշտ է, որ ՀՀ ԿԲ-ն ամրապնդի դրամավարկային քաղաքականության փոխանցման մեխանիզմը՝ գնաճի նպատակադրումն ավելի լավ սատարելու և փոխարժեքի ճկունությունը պահպանելու համար՝ որպես ցնցումների հիմնական կլանիչ:

«Թիմը հանդիպել է վարչապետ Կարեն Կարապետյանին, փոխվարչապետ Վաչե Գաբրիելյանին, ֆինանսների նախարար Վարդան Արամյանին, Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանին, էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար Աշոտ Մանուկյանին, գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանին, ՊԵԿ-ի նախագահ Վարդան Հարությունյանին, ինչպես նաև պետական այլ բարձրաստիճան պաշտոնյաների և քաղաքացիական

հասարակության ներկայացուցիչների, գործարար ոլորտի և միջազգային համայնքի հետ: Առաքելությունը շնորհակալություն է հայտնում իշխանություններին և մյուս գործընկերներին՝ համագործակցության և հյուրընկալության համար»: